«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
«Երևանի Ստ. Լիսիցյանի
անվան հ. 34 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Ն. Մանուկյան

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

4-րդ ԴԱՍԱՐԱՆ

Դասվար՝ Համբարձումյան Անյա Սերգյի

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը )* :2023-2024թթ

Արդեն չորրորդ տարին է միասին ենք:Դասարանը բաղկացած է 31աշակերտից, որից 9-ը աղջիկներ են, իսկ 22-ը՝ տղաներ: Բոլոր աշակերտներն էլ հաճախում են դպրոց, ապահովված են դասագրքերով և ակտիվորեն մասնակցում են ուսման գործընթացին: Գիտեն իրենց պարտականություններն ու իրավունքները:
Դասարանում ունենք Արցախից բռնի տեղահանված ընտանիքներից երեխաներ,ովքեր արդեն ինտեգրվել են կոլեկտիվին: Բոլորը սիրում են միմյանց,աշխատում են իրենց ուժերի սահմանում և միջադեպերի ժամանակ կարողանում են հանդուրժող լինել:
Պարտավորվում եմ տանել ուսումնադաստիրակչական այնպիսի աշխատանք, որ դասարանը չունենա թերություններ:

*2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում:* Դասարանում տանել համապատասխան աշխատանք, որպեսզի դասարանում ձևավորվի համախմբված և կազմակերպված կոլեկտիվ: Դասղեկի ժամեր անցկացնել,ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ հասնել նրան,որ երեխաները օգնեն մեկ-մեկու:Ուշադիր լինեն իրենց շրջապատի նկատմամբ:Այդ նպատակով կազմակերպել տարբեր միջեցառումներ:Էքսկուրսիաներ կազմզկերպել,խոսել շրջակա միջավայրի մասին: Կազմակերպել ծնողական ժողովներ:Մասնակցել դասալսումների:Այցելել մշակութային օջախներ:Համատեղ աշխատանք անցկացնել ծնողների հետ:Կազմակերպել բաց դասեր:
Ուսուցումը կազմակերպել ժամանակակիցմեթոդներով, հնարներով: Պարզել երեխայի գիտելիքների ցածր մակարդակի պատճառները և անհատական մոտեցում ցուցաբերել:

### *3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*

*3.1 Հոգևոր դաստիարակություն:* Զրույց՝ «Հայեցի դաստիարակությունը հայ ընտանիքում» թեմայով: Զրույց «Եկեղեցին և կրոնը որպես ազգային պահպանության գրավական» թեմայով: Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն դեպի հայկական եկեղեցին և խաչքարերը: Զրույց՝ «Կրոնական տոները» թեմայով:

*3.2 Գեղագիտական դաստիարակություն:* Երեխաների մեջ ձևավորել գեղագիտական ընկալումներ և ըմբռնումներ: Ձևավորել գեղագիտական դաստիարակություններ և մտածողություն: Դաստիարակել գեղագիտական պատկերացումներ և ճաշակ: Սովորեցնել նկատել և գնահատել գեղեցիկը:

*3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն:* Աշակերտներին հասկացնել, որ հայրենասիրությունը բարոյական բարձր արժեք է: Հայրենիքը սկսվում է երկրի մի թիզ

հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը իր մայրենի լեզվից, իր ծննդավայրից, իր ընտանիքից:

*3.4 Ֆիզիկական դաստիարակություն:* Նպաստել երեխաների օրգանիզմի զարգացմանն ու առողջությանը: Կոլեկտիվում զարգացնել սերը դեպի ֆիզկուլտուրան և սպորտը: Հաճախակի կազմակերպել շարժական խաղեր: Զբաղվել ամենօրյա մարմնամարզությամբ:

*3.5 Աշխատանքային դաստիարակություն:* Երեխաների մեջ ձևավորել իրենց և ընդհանուրի համար աշխատելու պահանջմունք:Ապահովել աճող սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Բացատրել, որ աշխատանքն է ստեղծում բնության բոլոր բարիքները:

*3.6 Բնապահպանական դաստիարակություն:* Ուսումնասիրել շրջակա միջավայրը:Երեխաներին ծանոթացնել բուսական և կենդանական աշխարհին: Արթնացնել սեր դեպի բնությունը:Երեխաներին բացատրել, որ մաքուր պահեն դասարանը, դպրոցը, տունը, բնությունը:

*4. Դպրոց-ընտանիք կապը:* Երեխաների կրթության և դաստիարակության գործում մեծ կարևորություն ունի դպրոց-ընտանիք սերտ կապը, որոնք լրացնում են մեկը մյուսին:Ստեղծել ընտանիքի և դպրոցի համագործակցության խորհուրդ՝ ծնողական կոմիտեներ, հայրական խորհուրդներ:

**Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը**

| Ուս. շբթ | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող |
|---|---|---|---|
| 1 | Գիտելիքի և դպրության օր | Սեպտեմբեր | դասվար |
| 2 | Ճանապարհային երթևեկության կանոնները | Սեպտեմբեր | դասվար |
| 3 | Զրույց –Գրքերի խնամք /թեմայով | Սեպտեմբեր | դասվար |
| 4 | Պատերազմը և նրա հետևանքները | Սեպտեմբեր | դասվար |
| 5 | Շնորհավոր տոնդ սիրելի ուսուցիչ | Հոկտեմբեր | դասվար |
| 6 | Ես սիրում եմ իմ երկիրը | Հոկտեմբեր | դասվար |
| 7 | Տարվա եղանակները | Նոյեմբեր | դասվար |
| 8 | Որն է իսկական ընկերությունը | Նոյեմբեր | դասվար |
| 9 | Դաստիարակչական գործունեության հնարավոր ուղղությունները | Նոյեմբեր | դասվար |
| 10 | Լինել բարեկիրթ և քաղաքավարի | Նոյեմբեր | դասվար |
| 11 | Իմ իրավունքներն ու պարտականությունները | Դեկտեմբեր | դասվար |
| 12 | Բնական աղետներ | Դեկտեմբեր | դասվար |
| 13 | Ձմեռ պապին ու նոր տարին | Դեկտեմբեր | դասվար |
| 14 | Մեր բանակը | Հունվար | դասվար |
| 15 | Կախարդական ձմեռ | Փետրվար | դասվար |
| 16 | Հիգիենայի կանոններ | Փետրվար | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | Հովհաննես Թումանյան /զրույց/ Հեքիաթի տոն | Փետրվար | դասվար |
| 18 | Անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն | Փետրվար | դասվար |
| 19 | Շնորհավոր տոնդ, մայրիկ | Մարտ | դասվար |
| 20 | Եկեղեցական տոները «Սուրբ զատիկ» | Մարտ | դասվար |
| 21 | Առողջ ապրելակերպ | Ապրիլ | դասվար |
| 22 | Զրույց նվիրված կանանց տոնին | Ապրիլ | դասվար |
| 23 | Զրույց «Ապրենք ազնիվ» թեմայով | Ապրիլ | դասվար |
| 24 | Զրույց «Մեծ եղեռն» թեմայով | Ապրիլ | |
| 25 | Մայիսը հաղթանակների ամիս | Մայիս | դասվար |
| 26 | Լինել պատասխանատու և պարտաճանաչ | Մայիս | դասվար |
| 27 | Մենք ուղևորներ ենք | Մայիս | դասվար |
| 28 | Իմ հայրենիքը Հայաստանն է | Մայիս | դասվար |
| 29 | Ամենահետաքրքիր դասն այս ուսումնական տարում | Մայիս | դասվար |
| 30 | Զրույց «Առջևում ամառ է» թեմայով | Մայիս | դասվար |

## ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

| Անցկացման օրը | քննարկվող հարցեր | ժողովի համառոտ բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 1.Դասարանի խնդիրները<br><br>2.Ծնող կոմիտեի ընտրություն | 1-ին կիսամյակի անելիքները: Կազմակերպչական աշխատանքներ , կարգապահություն և առաջադիմություն: | Կատարված է Ներկա էին բոլոր ծնողները |
| Դեկտեմբեր | 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում:<br>2-րդ կիսամյակի խնդիրներ | | |

## Աշխատանք ծնողների հետ

| Անցկացման օրը | քննարկվող հարցեր | զրույցի համառոտ բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| Ուստարվա ընթացքում հաճախակի | Ընտանիքիր դերը երեխայի դաստիարակության գործում | Անցկացնել զրույց «Ծնողի դերը երեխայի դաստիարակության գործում»: | |
| Ուստարվա ընթացքում հաճախակի | Առողջ կեցվածք և հիգենիայի պահպանում | Նպաստել երեխայի համարձակությանը , ինքնավստահության , քաղաքավարությանը: | |
| Ուստարվա ընթացքում հաճախակի | Այցելել դժվար դաստիարակվող երեխաների տուն | Ծնողների և երեխաների հետ բացահայտել որոշ բնավորության գծեր , ազրեսիվության և այլնի հետևանքները և պատճառները: | |

## Ծնողկոմիտեի կազմը

Նախագահ՝ Մանոյան Սյուզաննա Գարուշի
Անդամներ՝ Մկրտչյան Ռուզաննա Սարգիսի
Անդամներ՝ Տոնականյան Քնարիկ Ֆելիքսի

## ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

1. Քննարկվող հարցեր- կապ պահպանել պարապող ուսուցիչների հետ
2. Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակություն- ծնողկոմիտեի հետ քննարկել ուսման գործընթացում առաջացած խնդիրների լուծման եղանակները: